

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Տարեկան 12 Ձր.  
Վեցամսեայ 6 Ձր.

ԱՐՏԱՍՈՇՄԱՆ

Երկու քիւր միկ ծրարով  
Տարեկան 14 Ձր.  
Վեցամսեայ 7 Ձր.

ԱՍԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տօլար  
Վեցամսեայ 1.50 »

ԿԱՆԻՏԻԿ

Ծանոցման տողը  
20 սանիթ



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔԱՐԹԻ ԵՒ ՇՈՒՐԱԹ

ՆԱՍՑԻ

Rédaction du journal

«Iraounk»

VARNA (Bulgarie)

Редакция

на ВѢСТНИКЪ

«Иравунк»

ВАРНА

Դրոշինք եւ լեւ  
տրոշիր

ՁԵԿՈՅԸ

Ներկայ տարեկան լրանալու մի-  
այն երկու շաբաթ մնացած ըլլալով,  
ցարդ չը վճարող բաժանորդներէ կը  
խնդրուի որ փութեան իրենց բաժնե-  
զինը զրկել մեզ :

ՏՕՔԹ. Ն. ՍՕԹԻՐՕՅ

Վիրաքոյթ-Մանկաբարձ

Վառնա Մ.—Լուիզա փողոց թիւ 8  
(Զինուորական Բիւլօպի մօտ)  
Հիւանդ կընդունի ժամը 2—4

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Պետքեանց Յարաբերութիւնները

Իտալիոյ արտաքին գործոց  
նախարար Մ. Թիթոնի երեսփո-  
խանական ժողովին մէջ միջադ-  
գային քաղաքականութեան մա-  
սին իր մէկ ու կէս ժամ տեւած ճա-  
ռին մէջ ուշագրաւ յայտարարու-  
թիւններ ըրաւ, որոնց կարեւոր  
մասերը հոս կը համառօտագրենք:

Սա յարակցութեան քաղաքա-  
կանութիւնը, ըսաւ նախարարը,  
կը համապատասխանէ բարձրմա-  
նի եւ երկրի անհուն մեծամաս-  
նութեան բաղձանքին. այն պէտք  
չէ որ հարուածներու ենթարկ-  
ուի եւ ոչ ալ դիպուածական պա-  
րագանքու առջեւ խոնարհի:  
Յիշելով իշխան Պիլովի գերմա-  
նական խորհրդարանին մէջ եւ  
պարոն Ահմէթալի պատուի-  
րակութեանց առջեւ ըրած յայ-  
տարարութիւնները, ինքն ալ իր  
կարգին յայտարարեց թէ երր-  
եակ Ձինականութիւնը հիմ պի-  
տի ըլլայ իտալական քաղաքա-  
կանութեան ապագային մէջ:  
Մենք անոր հաւատարիմ կու-  
ղենք մնալ, շարունակեց Մ. Թի-  
թոնի. երբեք միշտ խաղաղա-  
կան դաշնակցութիւն մը եղած է.  
եւ ա՛լ աւելի խաղաղական եղած է  
այն օրէն ի վեր երբ կարելի ե-  
ղաւ ապահովուիլ թէ այն խո-  
չընդոտ մը չէ դաշնակից եւ ոչ  
դաշնակից պետութեանց միջեւ  
բարեկամական յարաբերութիւն-

ներ հաստատելու. այն մեզ կա-  
պահովէ անկախ քաղաքականու-  
թեան մը զգալի մասնաւորութիւն  
իտալիա ազդու դեր մը կը կա-  
տարէ եւ ազատ է Գերմանիոյ  
անխոհեմ միջամտութիւններէն  
նեղուելէ: Գերմանիոյ հետ մեր  
դաշնակցական յարաբերութիւն-  
ները իրենց հիմ ունին կատար-  
եալ հաւասարութիւն եւ փոխա-  
դարձ ակնածութիւն. նոյնպէս  
ալ Աւստրիոյ հետ:

«Գերմանիոյ եւ Անգլիոյ միջեւ  
յարաբերութիւնները մեծապէս  
բարեւոքուած են եւ այս կողմէ վը-  
տանդներ գոյութիւն չունին: Լա-  
ւագոյն ապացոյցը այն է որ Ա-  
ւստրիոյ մէջ—որուն յարաբերու-  
թիւնները Անգլիոյ հետ մերինէն  
նուազ մտերմական չեն ոչ մէկ  
վտանգ մտահոգ չլինի եւ  
չը կասկածուի թէ Գերմանիոյ եւ  
Անգլիոյ միջեւ լուրջ թշնամու-  
թիւն մը ըլլայ»:

«Գալով Մակեդոնիոյ, ըսաւ  
նախարարը, մեր շահերը հոն  
պաշտպանուած են մեր դաշնակ-  
ցութիւններով եւ Ալպանիոյ մէջ  
Վիսգոնթի—Վէնոսթա—Կոլուխովս-  
քիի կարգադրութեամբ: Մին-  
չեւ ցարդ մենք Աւստրիոյ հետ  
հետ կատարեալ համաձայնու-  
թեամբ վարուեցանք ապագային  
ալ նոյնպէս պիտի վարուինք: Կը  
տարաձայնուի թէ Ալպանիոյ մա-  
սին մասնաւոր կարգադրութիւնը  
բացասական է եւ բաղձանք յայտ-  
նուած է գրական համաձայնու-  
թիւն կայացնելու. ասոր կը պա-  
տասխանեմ թէ մեր տեսակցու-  
թիւնները Կ. Կոլուխովսքիի հետ  
հաճոյքի մաս չեն կազմած, այլ  
գրական, օգտակար եւ գործնական  
արդիւնք տուած են. այս տե-  
սակցութիւնները մեր տեսակէտ-  
ներու մէջ կատարեալ նոյնու-  
թիւն մը առաջ բերին, սա ի-  
մաստով որ եթէ սրաքիւ-քիշօն  
պահպանել անկարելի ըլլայ. ի-  
տալիան եւ Աւստրիան պիտի հա-  
մաձայնին լուծման մը վրայ, որ  
պիտի կայանայ Պալքանեան թե-  
րակղզիին ազգայնութեանց սկզ-  
բունքին վրայ հիմնուած ինքնա-  
վարութիւն մը տալու մէջ: Այս  
ծրագիրը ամեն տեսակէտով դրա-

կան ծրագիր մըն է. սա նոյն-  
պէս անշահախնդիր ծրագիր մըն  
է, որովհետեւ Արեւելքի մէջ մեր  
կենսական շահերը մեղի անշա-  
հախնդրութեան կը հարկադրեն:  
Ուստի պարտաւոր եմ մերժել այն  
խորհուրդը որ ինձ թելադրուած  
էր, առաջարկել Աւստրիոյ հողա-  
յին բաժանում մը եւ անոր հետ յա-  
ռաջխաղացումներ ընելու. քան  
ինչ որ Պէռլինի դաշնագրով ի-  
րեն կը պատկանի, պահանջելով  
մեզի համար հողային վարձատ-  
րութիւն մը: Այդ տեսակ վար-  
մունք մը հակասութիւն է այն ըս-  
կըզբունքներուն որոնց կը պար-  
տի իտալիան իր կապակցութիւնը  
եւ ստուեր պիտի ձգէր մեր բո-  
լոր արեւելեան քաղաքականու-  
թեան վրայ, համաձայնութիւնը  
որ կայացած է Կոմո Կոլուխովս-  
քիի հետ, անպատճառ պիտի  
բարգաւաճի ու զարգանայ յա-  
ռաջիկային պարոն Ահմէթալի  
հետ տեսակցութիւններով, բայց  
անոր հիմնական սկզբունքը պի-  
տի պահուի եւ ոչ մէկ փոփոխու-  
թիւն չի պիտի կրէ: Այս քաղա-  
քականութիւնը երկու տեսակ օ-  
գուտ առաջ կը բերէ. նախ թէ  
այդ Դուշէն հաւանութիւն գտած  
է, որովհետեւ թուրքիոյ ամբող-  
ջութիւնը կապահովէ, եւ երկրորդ  
այդ Պալքանեան պետութեանց  
համակրութիւնը եւ վստահութիւ-  
նը դէպի մեզ կը քաշէ, որովհե-  
տեւ ամեն պատահականութեան  
առջեւ, ազգայնութեանց սկզբունք-  
քին է որ նախապատուութիւն  
կուտայ, Այս քաղաքականութիւ-  
նը նոյնպէս կատարելապէս ներ-  
դաշնակ է Պէռլինի դաշնագիրը  
ստորագրող միւս տերութեանց,  
որոնք Աւստրիոյ եւ Ռուսիոյ Մուր-  
ցիտէքի ծրագիրը գործադրելու  
համար մասնաւոր թոյլտուու-  
թիւն ընելով միասին չը հրաժա-  
րեցան բնաւ իրենց ձայնը լսելի  
ընել տալէ Պալքանեան գոր-  
ծերուն մէջ»:

Յետոյ Մ. Թիթոնի իտալիոյ  
Պալքանեան պետութիւններու  
հետ ունեցած յարաբերութեանց  
գալով, սրանք չիլի է ըսաւ: Մա-  
կեդոնիոյ համար պարոն Ահմէթ-  
թալի կարծիքը հաստատեց. բա-

րենորոգումներու արդիւնքը բա-  
ւական գոհացուցիչ ցոյց տուաւ  
եւ գովեստ խօսեցաւ ոստիկանու-  
թեան իտալացի սպաներուն: Մա-  
կեդոնիոյ մէջ պետութեանց խա-  
ղապայութի գործին մեծ դժուա-  
րութիւնն է, ըսաւ նախարարը,  
այս նահանգի քրիստոնեայ ժո-  
ղովուրդներուն միջեւ տեղի ունե-  
ցող բռնէն եւ անագորուն կռիւր,  
այն ժողովուրդներուն որոնց օգ-  
տին համար ձեռնարկուած է բա-  
րենորոգմանց գործին. սպան-  
նութիւնները եւ թալանները որ  
կը գործուին հրոսակումներու  
կողմէ Մակեդոնիոյ մէջ, ամօթ  
մըն են քաղաքակրթութեան հա-  
մար եւ ահագին վտանգ մը իտա-  
լական կառավարութիւնը պիտի  
մասնակցի այն ազդու միջոցնե-  
րուն զորս Պետութիւնը հարկ պի-  
տի համարեն վերջ դնելու հա-  
մար իրերու այդ անհանդուրժե-  
լի վիճակին: Ռուսիան—Յունական  
թշնամութիւնն ա՛լ աւելի կը  
ծանրացնէ կացութիւնը, իտա-  
լիան, կեղրակացնէ Մ. Թիթոնի,  
պատրաստ է իր բարեացակա-  
ւալկցութիւնը նուիրելու այդ  
թշնամութիւնը անհետացնելու  
համար»:

Ֆրանսայի եւ Անգլիոյ հետ ի-  
տալիոյ յարաբերութեանց դառ-  
նալով Մ. Թիթոնի զայն բարե-  
կամական եւ մտերմական անուա-  
նեց: «Մեր հաւատարմութիւնը  
դաշնակցութեան, ըսաւ, մեզ կը  
թոյլատրէ պահելու ստացուած  
բարեկամութիւնները, ալ պէս  
ապահովելով ընդհանուր խաղա-  
ղութիւնը: Այս երբէք կրկնակ  
խաղ մը չէ, այս երբէք մաքիա-  
ւելական քաղաքականութիւն մը  
չէ, այլ միայն աճումը դաշնակ-  
ցութեանց, բարեկամութեանց,  
մասնաւոր կարգադրութեանց եւ  
մտերմական համաձայնութեանց:  
Ես կօրհնեմ այս տեսակ միաւո-  
րութիւն մը, որովհետեւ անոր  
արդիւնքը խաղաղութեան ապա-  
հովութիւնն է: Վասնզի պետու-  
թեանց մէջ պատերազմ մը ամ-  
բողջ եւրոպիոյ սնանկութիւնը  
պիտի ըլլայ»:

Նախարարը իտալիոյ քաղա-  
քականութեան ամփոփումը ըրաւ

քանի մը բառով, պարկեշտութեան և ճշմարտութեան քաղաքականութիւն անուանեց զայն, և ըսաւ թէ բանակին ուժեղացումը հակասութիւն չէ այս քաղաքականութեան հետ:

Մ. Թիթոնի բռնուն ծափերու մէջ վերջացնելով իր ճառը քաղաքացիական բեմէն:

ՎԵՐ. ՀԱՅԱԿ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Հնչակեան Ընկերներուն

Ներքոյ ստորագրեալ Վերակ. Հնչակ. փառաբանութեան տարիներէ ի վեր մեր վրայ դրուած ընկերական պարտականութիւնները անթերի կատարած ըլլալով, կուսակցութեան վերջին Պատգամ-ժողովին զրկած էինք մեր պատգամաւորը բացատրութիւններ առնելու և թելադրանքներ ընելու համար կազմակերպութեան գործունէութեանց մասին: Մեր զրկած պատգամաւորը արդէն վերադարձած ըլլալով, իրմէ բացատրութիւններ ստանալու համար ի զուր սպասելէ յետոյ, ըստ ի պոկեցանք հետեւեալ նամակով պատանջել անհրաժեշտ բացատրութիւններ:

Ստորագրեալքս, Վառնայի Վերակ. Հնչակեան ընկերներս ամսոյս 16-ի գիշերը հաւաքուելով, միաձայնութեամբ հետեւեալ որոշումները ստորագրեցին:

Նկատելով որ մեր պատգամաւոր Պ. Վաղարշակ Քէօլեան մեր արդարացի պահանջներուն բացատրութիւն տալ չէ ուզած, սոյն նամակով կուգանք բացատրութիւն պահանջել հետեւեալ կետերու մասին:

Ա. — Որո՞նք են կեդրոնական վարչութեան անդամները:

Բ. — Ինչո՞ւ յայտնի պորթիներ եւ որոշ անձնակազմութիւններ վաճառած են Հնչակեան շարքերէն, եւ ի՞նչ ամբաստանութեամբ:

Գ. — Ինչո՞ւ Նահանգային վարչութիւնները լուծուած են, եւ քոյր Մաս.

Նաճիւղերու իրարու հետ հաղորդակցութիւն արգելուած է:

Դ. — Ինչո՞ւ հին ծրագիրը եւ կանոնադրեր փոխուած եւ անոնց տեղ միապիտական նոր դրութիւն մը հաստատուած է:

Ե. — Ինչո՞ւ երկրէն պատգամաւորներ չեն եկած:

Զ. — Ինչո՞ւ յայտնի բարերար Ուն. ճեմար սպաննուած է:

Է. — Ինչո՞ւ պատգամաւորական ժողով տեղը փոխել հարկ տեսած են, նախագէս Ամերիկայ պիտի գումարուէին, ի՞նչ բան չարժանիք եղած է Եգիպտոս գնումները:

Ը. — Կեդրոնէն եկած չըջարեակաւոր կարգադրած օրը ինչ հիման վրայ յենլով, Պ. «Արագորը» կը պոռար թէ «Վառնայի մէջ ես ոչ մի յեղափոխական ընկեր չեմ տեսներ»:

Մենք իրեն Վեր. Հնչակ. կուսակցութեան անդամներ այս հարցումներու մասին բացատրութիւններ կը պահանջենք պատգամ. Պ. Քէօլեանէ նաեւ մենք կուգանք հաստատ համոզում գոյացընել այն կետերու նկատմամբ որոնք Պ. պատգամաւորին քաղաքէս մեկնելէն առաջ իր առջեւ իբր կարեւոր հարցեր դրուած էին եւ որոնց լեռնի բացատրութիւնները բերել պարտաւորացած էինք զինքը: Այս օրէն սկսեալ վերջին անգամ ըլլալով մէկ շարքի պայմանաւոր կուսակցութեան հարկ եղած բացատրութիւնները մեզ տալու համար. հակառակ պարագային պիտի նկատենք զինքը բացատրութիւն տալէ խուսափած:

Ընկերական բարեւանքով  
23 ԸՆԿԵՐՆԵՐ

Որոշեալ պայմանաւոր շատոնց անցած ըլլալով արդէն, ներկայ ստորագրեալներս ցարդ բացատրութիւնէ զուրկ մնացած, մեզ իրաւունք կուտանք հայ հասարակութեան յայտարարել թէ՝

Ա) Վեր. Հնչակեան կուսակցութեան վերջին պատգամաւորական ժողովը բոլորովին ապօրէն եղած է: (")

Բ) Ժողովին որոշումները կուսակցութեան նուիրական սկզբունքներուն ու ծրագրին հակառակ եղած են:

Գ) Հետեւաբար մենք այդ ապօրէն պատգամաւորական ժողովին նոր գծած աղագլխաւ ծրագիրը

ու արգելեցին այդ խեղճ գերուհիններուն մինակ մնալ եւ տնուր բաներու վրայ խօսակցել: Այնպէս որ, վարկեան մը ազատ չէին իրենց վիճակին վրայ բառ մը յայտնելու:

Հարեմանոցին մէջ մէկ հայ, մէկ Ասորի ու երկու չէրքէզուհի կային: Հրամանատարը, քմահաճօքին համաձայն, զիչրը՝ մէկուն քով կերթար:

Օր մը, երկու ներքինիները՝ ապաւանքին արեւնակը նստած՝ նարկիլէ կը ծխէին: Մին տարիքն առած ծերունի մըն էր, իսկ միւսը՝ հազիւ երեսունի մօտ կերեւնար:

— Ինձի նայէ՛. Ասատ, նկատել տուաւ ծերունին խղիւղած ձայնով մը: Ես կեանքս քաղիկը վրայ չի գար... հիւսնո՞ղ է: Ի՞նչ է... չը հասկցայ: Երբեքստորը ներքինին, սրուն Ասատ անուն տուած էր ծերուկը, չար ժգիր մը թրթռացուց իր թրթոջ ու լայն շրթանց վրայ եւ աչքերը ճմլելով պատասխանեց:

— Ի՞նչ պիտի ըլլայ... չտո չտո Զիւլֆին քովը պիտի երթայ, անանկ

գիրը և որոշումները մերժելով, կը մնանք նախկին ծրագրին եւ ուղղութեան հաւատարիմ:

Դ) Փափաքելով արտասահմանի և երկրի բոլոր գաղափարակից ու գիտակից ընկերներու և խումբերու հետ յարաբերութիւն մը չակել, կը շարունակենք գոյութիւնը Վառնայի Վեր. Հնչ. Մասնաճիւղին որուն նոր հասցէն է՝

Միքայէլ Հ. Միքիսիէան  
4-րդ ոչխար քիշ 25 Վառնա

Արդ, կոչ կ'ընենք երկրի, Ամերիկայի, Եգիպտոսի և Եւրոպայի մեր գիտակից ընկերներուն որ հաստատ մնան Վեր. Հնչ. կուսակցութեան ծրագրին ու սկզբունքին վրայ և պահեն իրենց գոյութիւնը, զգուշանալով հերձուածող Հնչակեաններու էնթրիքներէն և վերջին պատգամ. ժողովի գծած նոր ծրագրէն, մինչեւ մեր գաղափարակից ընկերներու և խումբերու միջև կատարուելիք բանակցութեանց արդիւնքը:

Վառնայի Վեր. Հնչակ. Մ-դի առժամ. վարչութիւն

Ատենադպիր  
Միւսիսի  
Ատենապետ  
ՀԱՅԱԿ. ՄԵԼԻՔԻՍԻԱՆ

(\*) Ապօրինութեան բազմաթիւ փաստերէն մին է ժողովատեղին Ամերիկան որոշուելէ եւ հրաւերներ ցրուելէ յետոյ յանկարծ փոխելով Եգիպտոսի մէջ ժողով գումարելը, որպէս զի Ամերիկայի 40 իշափ Մ-դի պատգամաւորներուն ներկայութիւնէն խուսափին, ինչպէս որ միայն երկու պատգամաւորներ եկած են, մինչդեռ բառ կանոնադրի գոնէ 8 պատգամաւոր պէտք էր գային Ամերիկայէն: Իսկ աւելի ցաւալին այն է որ երկրէն բնաւ պատգամաւոր չէ գրտնուած, մինչդեռ երկրի պատգամաւորներուն ներկայութիւնը անհրաժեշտ էր եւ առանց երկրի ձայնին ծծաղելի է անոր ճազատագիրը վճռել:

Վառնա Եւ անոր գիւղերը դրամ փոխադրել փախագողները քող դիմեն մեզ: Պայմաններ դիւրանալու, անպայման վստահորդիւն եւ ապահովորդիւն:

Վառնա Ե. Կ. Ճանկիւղեան

չէ՞: — Աղէկ... բայց փաշան, ինչպէս յայտնի է, կը սերէ այդ կեանքի աղ-չիկը, առարկեց ծերուկը ներքինին ցուրտ բացատրութեամբ մը: Անոր մաշուրիւ նիհարալը, ասանկ վիճակի մը հասնիլը լաւ չեմ տեսներ... այնպէս որ փաշան օր մը պատճառ պիտի բռնէ ու պաշտօնէ պիտի հանէ մեզի: — Է՛հ, դուն ալ... Եթէ պաշտօնէ զրկուինք, ինչ կը կարծես, տնօրէն կը մնանք: Մտաւայութիւն չէ մի՞ ուր օր երթանք, պէտք կ'ունենան մեզի:

— Ատկա խնդիր մը չէ. բոլոր պէտք է մեր պարտականութեան համաձայն վարուինք:

— Ի՞նչ ընենք, կեանքի մը աղ-չիկը կը նիհարնայ:

— Պէտք է գիտնանք պատճառը:

— Երբեք... հոգս է հատիք որ երեսմ այդ բաներու վրայ մտածելով ինքզինքս նեղեմ, կը զարմանամ քու խելիքդ, Յուստ պէյ, որ պարագայ ցաւեր կը գտնես քեզի համար: Ասկից առաջ փաշան իր բոլոր խանդովը կը

ՀԱՅ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

«Ռազմիկ»-ի 12 թիւ «հապա ազգային միութիւնը» վերնագրով յոգ-ուածին մէջ՝ պ. Ռ. Ջորդարեան կը թողու մեր ազգային չէզոքները, մեր ազգային խելացիները, վարչագէտները, հարուստները ու զանոնք կը մղէ անգործութեան, անշարժութեան եւ մեռելութեան, եւ ուրիշ տեղ մ ալ կըսէ. Էթնիքա-թէրիայի վատիչ անգամները նախարարներ, կառավարական ու զինուորական յայտնի անձնակազմութիւններ, վերջապէս յոյն ազգին պարտաճանաչ ու հայրենասէր մարդիկն էին»:

Մեր կուսակցութիւններէն ո՞րը արդեօք Էթնիքա-թէրիայի ծրագրով, գործելակերպով ու անոր անկեղծութեամբ, ճշմարիտ եւ իրականալի միջոցներով միմիայն հայրենիքի փրկութիւնը իրեն նշանաբան ընելով հրապարակ նետուեցաւ՝ որ Էթնիքա-թիւնները, վարչագէտները, հարուստները համախմբուէին անոր շուրջը, կամ թէ ո՞ր կուսակցութիւնները (բացի մահու սպանալիքով դրամ գանձելէ), ուրիշ ճգնաժամային օրերուն ազգին խելացի եւ փորձառու անձներուն խորհրդներէն օգտուելու համար՝ զանոնք խորհրդակցութեան հրաւիրեցին: Անշուշտ եւ ոչ մէկը, վասնզի ամենքն ալ կեղծ էին, գաղտնի նկատուներ, թագու իսկա-տակներ ունէին, եւ առոր համար մօնօրով եղած ընկերութիւններու պէս ազգային յանգամանք չունէին, եւ համակիր չեղող մը իրաւունք չունէր քննադատելու կամ ուրիշ կարծիք յայտնելու, սակայն ամենամարդիկ ամենամարդիկ խորամանկութեամբ հայրենիքի փրկութիւնը մէջտեղ կը նետէին յաճախ, որ իրենց գոյութիւնը պահպանելու համար միմիայն հաւաքեն, եւ ժողովուրդին աչքին ալ փոյի փշիւտ համար՝ մին միւսէն ձախաւէր, մին միւսէն ազգակործան ցոյցերով ընդհարուներով իբար չէզոքացնելու իրարմէ աւելի գերազանց ուժերով ներկայանալու խնդրութիւններ կընէին: Էթնիքա-թէրիան երբեք չի զիջաւ Պօլսոյ մէջ անկիւն մը կրծկուած պօմպա՝ մը պայթեցնելով հազարաւոր մարդոց մահուան եւ հազարաւոր հայրենակիցներու թշուառութեան պատճառ ըլլալ: անիկայ իրեն համար նուաստութիւն, վատութիւն

սիրեր Զիւլֆին... Ըսէ՛, ի՞նչ ըրաւ անոր մահունէն ետքը: Նոյնպէս՝ հիմակ ալ այդ կեանքի աղ-չիկը կապուած է իր սրտին... Բայց մինչեւ ե՞րբ... ըստ իս, քանի մը ամիսէն անկից ալ պիտի անձրանայ:

Յուստ պէյ վշտացած եղանակով մը կերպարանք մեկդի գարձուց ու չը պատասխանեց: Զգաց թէ գիմացինը դեռ ամփոք մէկն էր. մինչդեռ ինքը կեանքին մեծ մասը հարեմին մէջ անցուցած ըլլալով, գիտէր թէ գերուհի մը արցունքն օրքան զանն էր:

Նարկիլէն վերջացած էր երկու ներքինիները շուտով մը զահլիճը մտան ու հարեմանոցը աչքէ անցուցին:

— Գնա՛՛ քովերին, ըսաւ Ասատ ժպտելով, ես պարտեզը պիտի իջնեմ ու նարտ մը պիտի խաղամ ալտէյին հետ:

— Աղէկ, բայց չատ մի ուշանար, առարկեց ծերունի Յուստ պէյ:

— Ոչ, քիչ պիտի խաղամ, յարեց Ասատ ու վաղելով սանդուղիներէն վար իջաւ:

ու փոքրագուծներն համարեց, այդ տե-  
սակ անխնայական վախկոտ ցայցերը,  
այլ իր պահանջած հողին վրայ, քաջի  
պէս թշնամիին դէմ կռուեցաւ ու ա-  
րիարար պաշտպանեց իր հայրենիքը եւ  
իր տառապեալ հայրենակիցները Անի-  
կա իր գործունէութիւնը երկրին մէջ  
կեդրոնացուց, իրեն հասած դրամներու  
սանդիմն իսկ երկրին կոռուզներուն  
յատկացուց: Իսկ մերինները, ո՛հ հար-  
ցուցէ՛ք Սասունցիներուն, Աշխուն-  
ցիներուն, կամ Անդրանիկներուն...  
եւ այսքան ապօրինութիւններէ վերջ,  
վա՛յ անոր որ ձայն բարձրացնէր,  
բողբէր կամ քննադատէր, ա՛յ մեռած-  
էր այն մարդը, որքա՛ն ալ յարգուած  
մէկը ըլլար մէկ օրուան մէջ, գետնի  
հետ հաւասար ցնխոտած էր, կամ սա-  
լայտակներու վրայ իր դիակը փռու-  
ուած: Վայրագ էին մեր կուսակցու-  
թիւնները եւ Համախն աւելի արեւ-  
նարու բռնակալ, վասնզի Համախն  
ձեռքէն ճողպարած՝ ազգին տնտեսէր  
զաւակները խողովողներն անոնք: Արթ-  
ւեան, Միսո, Որսորդ եւ ուրիշ շատեր,  
նոյնպէս ազգին բազմադէմի ցաւերուն  
սպեղանի եղող, ու օտարներու առջեւ  
ազգին բարոյական վարկը բարձր պա-  
հող Արիկ Ունձեաններ, Ժամհարեան-  
ներ, Գարեգէօզեաններ, Պալէօզեան-  
ներ եւ ուրիշներ մեր կուսակցու-  
թեան զոհերն են: Վերջապէս բոնու-  
թեան դէմ ժողովուրդը պաշտպանելու  
քողին տակ բռնակալներ, Բռնութիւն  
գազախարի վրայ, բռնութիւն խղճի  
վրայ, բռնութիւն կամքի վրայ: Մարդ  
իր ինչքին, իր ստացուածքին տէրն է,  
պէտք է աղատ ձգել, ինչպէս որ ու-  
ղէ այնպէս գործածէ, միթէ քառասուն  
տեսակ կուսակցութիւն ալ կազմուի  
պէտք է որ անպատճառ ազգը հոգայ  
առնող պատգամաւորներուն ներկայա-  
ցուցիչներուն, օրկաններուն, բրոյս-  
կանդիտներուն եւ բոլոր մասնաճիւ-  
ղերուն ծախքերը: ասկէ աւելի անի-  
րաւութիւն կըլլա՞յ արդեօք... Եթէ  
նպատակն հայրենիք փրկել է եթ-  
նիքա-էթնիքի պէս ընկերութիւն մը  
բաւական է. իսկ եթէ նպատակն  
ուրիշ է. այն ատեն ի՞նչ իրաւունք  
ունին ազգէն դրամ պահանջելու, մի-  
գէր հայրենիքի փրկութիւնը պէտք է,  
որպէսզի մեր լեզուն, մեր գրական-  
նութիւնը, մեր արուեստները մեր  
ցեղին բոլոր հանճարը եւ արտադրու-  
թիւնները, բնատիպ գոյներով ցուա-  
ցնել կարենանք, Այվոզովսքիի պէս  
տիեզերահռչակ արուեստագէտ մը

ոռու ճանցուած է բոլոր պատմու-  
թեանց մէջ, նոյնը Լորիս Մելիքովի  
եւ ուրիշներու համար: Գիտեմ մեր  
այս գողափորները թիւ ուղղաշնա-  
կանութիւն պիտի սնուանեն շատերը  
սակայն ամենէն կատարի ընկերվա-  
րականներն իսկ մօլի ազգայնական-  
ներն, հաղարար փաստեր կան խօս-  
քս ապացուցող, աշխարհիս ամենէն  
հասարակական ուսման արարական եր-  
կիրներն իսկ կատեն իրենց երկրին  
մէջ եղող բոլոր տարբեր ցեղերու տոն-  
մային ձգտումները արող լեզուն պէտք  
է իշխէ, տիրող տարրը պէտք է ձուլէ  
իր մէջ բոլոր այլազան ցեղերը, վեր-  
ջապէս ընկերվարականութիւնը մանր  
ցեղերը աւելի շուտ ձուլելու քաղա-  
քավարական ու խորամանկ միջոց մէ:  
Անցեալ օր երիտասարդ թուրքերէն  
կարեւոր անձ մըն ալ ըսաւ «Գաւառի  
Սուլթան Սելիմի ծրագիրը ամենէն  
դրականն է. անոր ծրագրով իր երկրին  
մէջ գտնուող ցեղերը պէտք էր կամ  
մահմադականութիւնը ընդունէին, կամ  
հեռանային. սակայն այն ատենուան  
վիւքան հակառակեցաւ կրտէ, բայց  
բոլոր Եւրոպացուց ձգտումները ստոր  
կը համապատասխանեն, ուստի մենք  
ալ պէտք է գործադրենք: Ուրիշ, բո-  
լոր աշխատանք տարածանքները կամ  
նորերը աւելի անողոք են քան հայե-  
հիւները, Սոսիալ տնտեսական թուրքերը  
Ռուսիոյ մէջ, փոխանակ իրենց ցեղա-  
կիցներուն մոլեռանդութիւնը վայրա-  
գութիւնը զսպել ջանալու, թերթերով,  
ձառերով, թուրքերի կողմէ աւելի զբո-  
ղեցին ու մինչեւ այսօր անոնց մար-  
դակի ու ճիւղային ձգտումները կը  
փայփայեն ու կը զբոգեն. նոյնպէս  
երիտասարդ թուրքերը, Պոստոյ ցոյցե-  
րուն ծրագիրները իրենց յայտնի ըլ-  
լալով հանդերձ, ջարդերու ատեն հայե-  
րը պաշտպանող, հայերուն դէմ եղած  
ատելութիւնը մեղմացնելու համար ո՛չ  
թերթերով, ո՛չ թուրքերի կողմէ բռն մը  
անգամ չը հրատարակելէ դատ, հինե-  
րէն աւելի կատարի եղան եւ են մին-  
չեւ այսօր, եւ ցաւալի, շատ ցաւալի է  
որ գտնուեցաւ դեռ էլ մասնանի պէս  
բուսակեր ցաւազար խնդ մը, որ երի-  
տասարդ թուրքերէն քանի մը ֆրանք  
փրցնելու համար եւս հերոսական  
թերթերուն մէջ հայ դատին վնասող  
յօդուածներ գրել, հայերը մոլեռանդ,  
վախառու, եւ ոչ մէկ տեղ մը մեծա-  
մասնութիւն չունեցող ազգ մը ցոյց  
տալով, առանց տեսնելու իր աշխարհը  
առջեւ պարզուած այն ճշմարտութիւնը

թէ, թուրքին լուծէն ազատուող ազ-  
գերէն եւ ոչ մէկը մեծամասնութիւն  
կը կազմէին. եւ դեռ նոյնպէս գտնու-  
եցան այնպիսի դաւաճաններ որոնք  
էջմիածնայ կեդր. ժողովին մէջ անա-  
մօթաբար պահանջեցին որ էջմիածնայ  
հողերը թուրքերուն եւ հայերուն հա-  
ւասարապէս բաժնուին. նոյնպէս գտ-  
նուեցան այն տեսակ կուսակցութիւն  
ներ որ հայրենիքի փրկութեան համար  
հաւաքուած զրամները գործադուլնե-  
րու եւ ուրիշ սօցիալիստական խնե-  
զութիւններու յատկացուցին, եւ մին-  
չեւ իսկ գործաւորներու քանի մը կո-  
պէկ աւելի օրտական ստանալը եւ կամ  
թէ ժամ մը պակաս աշխատիլը Հա-  
յաստանի խեղճ, թշուառ, անօթի ու  
մերկ ժողովուրդի դատէն նախամե-  
ծար համարեցին, առանց մտածելու եւ  
լուրջ կերպով ուսումնասիրելու թէ,  
Հայաստանի խեղճ ժողովուրդը հաղար  
անգամ նախամեծար կը համարէ Ռու-  
սաստանի հայ գործաւորը ըլլալ քան  
թէ թուրքին բարձրարտութեանց ու  
ճիւղային գողախութեանց ենթակայ  
ըլլալով ամեն օր ամեն վայրկեան մա-  
հը դիմակեան սուրի պէս իր գլխուն  
վրայ տեսնել: Սեր մարդասէր սօցիա-  
լիստները ի գո՛ւթ կը չալժէ խեղճ  
գործաւորներուն վիճակը, ու քանիք  
դժբա՛ղդ կը գտնէ. թող երեւոյ մարդ-  
կութեան ամենագոյնի գողախութեան  
մարդ Հայաստանցի թող տեսնէ, թէ  
մարդկութիւնը ի՞նչ սարսաղացիկ  
ճգնաժամի կանցնէ. ուստի պէտք է  
փրկել ամենավշուառագոյնը: Սակայն  
ո՞վ կարող է արգիլել այս ազգային  
խառնվածադիմութիւնը, ո՞վ կարող է  
դարձան մը գտնել այս բարկունակ  
զրուկիւն, ո՞չ ոք... վասնզի վաճա-  
ռականական ընկերութեանց պէս, ան-  
դամ չեղող մը երբէ՛ք իրաւունք չու-  
նի խառնուելու, որքան ալ խելացի  
ձեռնհաս եւ փորձառու մէկը ըլլայ  
տն: Աշխարհի ամենէն լուսաւորեալ  
երկրներուն մէջ որեւիցէ գործ կը  
յանձնուի նոյն գործին մասնագէտ ան-  
ձանց. ինչո՞ւ մեր կուսակցութիւնները  
պահ մը իրենց պատասխանատու ծա-  
րայնութիւններէն եւ քսմով փա-  
ռասիրութիւններէն հրաժարելով յանուն  
ազգային գերազանց շահերու, չեն հրա-  
ւերեր զինուորական ու քաղաքական  
փորձառու անձեր, գործին ղեկը ա-  
նոնց յանձնելու: վասնզի գործերուն  
չիգար. իրենց խաղաղութիւնները մեր-  
կապարանոց ու յայտ յանդիման երե-  
ւան պիտի ելլեն, այսքան ղուր տեղը

թափուած արեւները պիտի խորդեն  
զիրենք: ու այսքան փճացած միջին-  
ները այրուած աւերուած չեն գիւղեր  
քաղաքները անհանգիստ պիտի ընեն  
իրենց խիղճը եթէ ունին... եւ դեռ  
կը յանդգնին ազգին ուղղորդութիւնը  
վերականգնելու համար վաճառք միաբա-  
նու թիւները ցոյց տալ. ո՞վ կը կըլլէ  
ատոնք այլեւս, ո՞ր վաճառք, ո՞ր միա-  
բանութիւնը ազգին ընդհանուր ճա-  
կատագրին հետ գործ ունի, եւ կամ  
կուսակցութեանց պէս միջինարտ  
զեղծութիւններէ զատ արեւաբոլ ո՞՞-  
րագործութիւններ: Եւ տակաւին կը  
հաւաստեն թէ՛ Հ. Յ. Դաշնակցու-  
թիւնը ընդհանուր ժողովէն վերջ քանի  
մը հարուստներ պիտի սպաննէ, որպէս-  
զի ուրիշներ վախնան եւ դրամ տան,  
անշուշտ մինչեւ ցարդ սպանուած բա-  
րերար հարուստներուն պէս, որոնք  
իրենց բարերարութիւններով ճանչ-  
ցուած էին արդէն. քանի՞ քանի՞ հա-  
րուստներ կան որոնք սանթրի մը աղ-  
գին օգուտ չընելու համար անձանթ  
մնացած են, առդին բարերարը, իրեն  
բարի գործերով ճանչցուած ըլլալուն  
համար կսպաննուի, եւ ինչ իրա-  
ւունք ունին սպաննելու, նոյնիսկ  
զրամ պահանջելու, քանի որ անգամ  
չեղող ոչ սոսիալիստը, ո՛չ պարծուան  
ո՛չ կղեր ոչ պետական մարդը չեն  
խառնուիր իրենց գործին. եթէ կա-  
ռարկեն թէ ազգային կուսակցու-  
թիւն է եւ ազգին փրկութեան յատ-  
կացուած ընկերութիւն մը, ուրիշ  
պէտք է՝ ամեն հայ իրաւունք ունե-  
նայ խառնուելու, ամենուն զիտողու-  
թիւնները, քննադատութիւնները նկա-  
տողութեան առնուին, ո՛չ թէ՛ Հ. Ս.  
առաջնականներ, Գալանտարեաններ եւ  
ուրիշ շատ մը յարգուած անձեր Ա.  
Արփիարեանի վիճակին ենթակելու  
համար, թերթերով, թուրքերի կողմէ,  
ի՞նչ զարհուրելի բառեր, անականներ  
զրպարտութիւններ ու սեւցնող ի՞նչ  
միջոցներ ստեղծեն: Այս վիճակին մէջ  
մարդ պէտք է կամ պ. Մինաս Աշրա-  
ղի պէս գրելը կոտորէ ու հեռանայ,  
կամ Յ. Գուրպէթին պէս անձը զէն-  
քով պաշտպանէ եւ կամ վարձով տա-  
ռասին հասնի: Ուրիշն այս ընթացքով  
մեր կուսակցութիւնները «ենչիլէրի»-  
ական օժախներ ու համոթական բըռ-  
նակալներն եւ անա այս է որ թերա-  
հաւատ կը թողու ու կը խրոչեցնէ  
մեր չէզոքները, վարչագէտները եւ հա-  
րուստները...

ԻՐԱՆՈՒՆԻ

Մերունի Ֆուադ պէյ, որ երեք ներ-  
քիններուն մէջ ամենէն խղճամիտ ու  
բարեսիրտ անձն էր՝ պահ մը հարեմա-  
նոցի միջանցքին մէկ անկիւնը կեցաւ.  
մտածեց ինքնիքն ու յետոյ սենեակ  
մը մտաւ: Սենեակին մէջ մանկամարդ  
աղջիկ մը կար. որ հազիւ 15 տարու,  
բարձրահասակ սեւ աչքերով, մեղա-  
մաղճոտ կերպարանքով, վշտալից նայ-  
ուածթով եւ գեղանի էր:

— Մինա՞կ ես, Նուրիմէ, հարցուց  
ծերունի ներքինին՝ անուշ ու գորո-  
վալի ձայնով մը:

— Ո՛հ, այո՛... միմիջեց մանկամարդ  
աղջիկն, որուն Նուրիմէ անուն տը-  
ռած էր ծերուկը:

— Ինչո՞ւ համար:

— Հանդիստ չեմ, ... կուզէի քիչ  
մը քննալ:

Մերունին նստեցաւ թափշէ զսպա-  
նակաւոր բազմոցի մը վրայ եւ բացաւ  
պատուհաններուն լայն ու ծիւրանա-  
գոյն առեւիք վարագոյրները:

— Նստի՛ր, Նուրիմէ, ըսաւ ծերուկը՝  
մանկամարդ աղջկան. նստի՛ր քովս ու

ըսէ թէ ի՞նչ է պատճառը քո տրտ-  
մութեանդ... ինչո՞ւ արցունքներ  
թափելով օր կանցնես... ինչո՞ւ զը-  
ռուարդ չես... ինչո՞ւ կը մաշուի...  
ի՞նչ է ցաւդ:

Նուրիմէ, որ կատէր այդ Արապ ներ-  
քինները, որ տարօրինակ ու գրեթէ  
հեգնական նայուածք մը նետեց ծե-  
րունի Ֆուադ պէյին վրայ ու չը պա-  
տասխանէ:

— Ինչո՞ւ չես խօսիր, յարեց Ֆուադ  
պէյ:

— Ինչ պիտի խօսիմ... առարկեց  
Նուրիմէ. ի՞նչ է հարցուցածդ:

— Կը հարցնեմ թէ՛ ինչո՞ւ տխուր  
ես. կը հարցնեմ թէ՛ ինչո՞ւ ամեն օր  
արցունք կը թափես. կը հարցնեմ թէ՛  
ինչո՞ւ կը մաշուի...:

— Ո՞վ:

— Դու:

— Ե՛ս:

— Այո՛:

— Ի՞նչ գիտնամ...:

— Հրա՞նդ ես:

— Ոչ:

— Փափաք մը ունի՞ս:

— Ոչ:

— Հապա ի՞նչ է պատճառը: Տե՛ս,  
քննէ զատ մէկը չըկայ որ այս ապա-  
րանքին մէջ արցունք թափելով օր  
անցունէ, մէկը չըկայ որ իր երջան-  
կութեան ստուերն ինքն ըլլայ...:  
Մինակ դուն ես որ գերեզմանի մը մէջ  
ապրող մէկու մը պէս ոչ կը ժպտիս,  
ոչ ալ կը նայիս շուրջդ:

Մանկամարդ աղջիկը տակաւ առ  
տակաւ կը ճնշուէր ներքին անզուսպ  
ցաւի մը մէջ... ու կը զգար թէ չի  
պիտի կրնար հանգուստն, չի պիտի  
կրնար խեղդել զայն... կը զգար թէ  
լեցուած էր, ա՛խ պարպուելու չափ  
լեցուած էր:

Ո՛հ, Ֆուադ պէյ, միմիջեց Նուրիմէ  
հեծկտալով. ուրկի՞ց է այդ աստի-  
ճան գութ՝ կեանքուրի մը աղջկան մը  
վրայ... չէ՞ որ այս յարկին տակ ա-  
մենէն թշուառն ես ես:

— Ինչո՞ւ թշուառ ըլլաս... չէ՞ որ  
փաշան իր բոլոր գործովանքովը կը սի-  
րէ քեզ, առարկեց Ֆուադ պէյ:

— Գիտեմ... բայց...

— Ի՞նչ բայց...:

— Անօգտ տ է... ես չի պիտի կըր-  
նամ սիրել զինքը:

— Պատճառը...:

— Պատճառը...:

Ո՛չ չը կրցաւ իր խօսքը առաջ տա-  
նել... Նուրիմէ զգաց թէ լեզուն  
քիմքին կը փակէր ու ձայն մը կը մը-  
նար իր հոգեւոյն խորը: Գիտէի թէ  
ներքինի մը պարզապէս լրտեսներու  
դերը կատարող հացկատակ մըն էր,  
որուն պաշտօնը զարչիլի պարտակա-  
նութեան մը ներքեւ զրուած էր: Գի-  
տէի թէ փաշան անոր յանձնած է զին-  
քը, հեռեւաբար անոր մէկ յայտնու-  
թիւնը բաւական պիտի համարէր իր  
կեանքը վրդովել տալու: Ուստի ճիգ  
մը ըրաւ ինքն իր վրայ, զսպեց աչ-  
քերու արցունքն ու ծածկելու համար  
երեսներին յուզումը, յարեց:

(Շարունակելի)

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ԸՆԹԵՐՑԱՐԱՆԸ

«Շարժում»-ի վերջին թիւերէն մինչեւ կարգացի վերակ-  
հանգի կուսակցութեան Պուլկա-  
րիոյ ներկայացուցիչի անունով  
նամակ մը ուղղուած ընթերցա-  
րանի անդամներուն :

Նամակագիրը որ Բէօլէեանն է  
իր այդ քայլով կապացուցանէ  
անգամ մըն ալ թէ, ինք բաւա-  
կան ճարպիկ և արախաղաց մըն է  
հանրութեան աչքին թող փշե-  
լու, ցոյց տալ ուղիով թէ վեր-  
հանգի կուսակցութեան «Հայկական  
ընթերցարան»-ի գոյքերը քայ-  
քայման պարագային ընդունիլ  
չի հաճիր :

Այդ վարկաբեկուած մարդուկը  
լաւ համոզուած էր որ վերա-  
կազմակերպութեան վերջին աղգա-  
գաւ և ապօրէն պատգամաւորա-  
կան ժողովէն ի վեր անդամնե-  
րուն վստահութիւնը վերցած է  
այդ կուսակցութեան արդի վա-  
րիչներուն վրայէն, և հետեւաբար  
ընթերցարանէն մազի մը չափ  
բան մը չի պիտի վստահինք ա-  
նոնց ու իրեն. ուստի աճալարա-  
րի փութկոտութիւնը ունեցեր է,  
ինք աւելի առաջ շարժելով այդ  
յայտարարութիւնը ընելու, կան-  
խելու համար ընթերցարանի  
անդամներուն յառաջիկայ ընդհ-  
ժողովի մէջ տալիք անվստահու-  
թեան որոշումը վեր. Հնչ. արդի  
վարիչներուն գէժ ընթերցարա-  
նի գոյքերուն մասին :

Աֆէրի՛ն տղէկ, բաւական ճար-  
պիկ է եղեր, և արգէն ինք ա-  
պուշ մը ըլլալու էր չի կուսնե-  
լու համար որ մենք ընթերցա-  
րանի և վերակ. Հնչակ. մասնա-  
ճիւղի անդամներս մեծաւ մա-  
սամբ խոզերու առջեւ մարգարիտ  
ձգող միամիտներէն չենք :

Միայն չի Համարձակուի  
Վառնա, 14 Դեկտ.

Օրինակ մըն ալ «Շարժում»-ի  
զրկուած է :

### ՀԱՎԱՏՈՒՄ

#### ԹԻԻՐԻՔԻԱ

Տրապիզոն միւսլիմանլարը ի-  
չինտէ թէքրար իսթիլալ հա-  
զըրլըը հըսս օլընտըընտան,  
հիւքիւմէթ տէրհալ աչախսի  
վէրկինին թահսիլինի թէքք վէ  
պաղը թէչլիգճիլէրի սիւրկին  
իթմէքլէ ըսեանըն էօնիւնիւ մու-  
վաղգաթէն ալմըշ տըր. ֆաղաթ  
եէնիտէ զուհուրինտէն հիւքիւ-  
մէթ գօրգիյօր Սուլթանըն տո  
մատը եալէր իսաք պէյ. Թուատ  
րաշանըն Սիւրէպյա սիւրիլտի-  
կի էսնատէ Տրապիզոնա նէֆի  
կէօնտէրիլմիշ ալմաղլէ՝ սօն իս-  
թիլալըն ասըլ թէչլիգճիլէր քէն-

տիսի զանն օլունմուշ վէ պու-  
սէպէպլէ ըութպէսի ալընուպ  
մահպուս իտիլմիշ տիւր. Բօլիսիա  
կէօնա անըն էվինտէն ժէօն  
թիւրքլէրին մուամէլաթընա տա-  
յիւր էվրաղլար պուլմուշ. հագը  
գաթը շու տըր քի՝ իսաք պէյին  
Բարիստէ պուլունան ժէօն  
թիւրքլէր իլէ մուխապէրէսի  
վար ըմըշ :

— Իզմիր վալիսի Բեամիլ բա-  
շանըն մախտումը Սայիտ բաշա  
իզմիր էհալիսինի տէհէթէ իլ-  
գա իթմիշ օլտըը կիպի, պիւր  
վաղըթտան պէրու. խըրսըզ չէ-  
թալարը թէչլիլ իթմէքլէ՝ է-  
հալիի սօյտըրմագտա վէ 100տէ  
պիւր մըգտարընը քէնտիսի ալ-  
մագտա ըտը. Գօնսուլար չօգ  
տէֆալար իշթիլքեա իթտիլքէ-  
րինտէն տօլալը՝ հիւքիւմէթ օլ  
մաղարբաթըն ատամը իզմիրտէն  
թէպիտ իթմէք իչիւն գարար  
վէրտի վէ Հիւրէպյա կէօնտէրի-  
լէճէք իտի. ֆաղաթ օրանըն  
հալասը իլէ իմթիլգա իտէմէյէ-  
ճէկինի պէյանէ իտէքէք իզմիր-  
տէն չըգմագ իսթէմէյօր վէ հիւ-  
քիւմէթ անըճէպրէնկէօնտէրմէկէ  
ճէսարէթ իտէմէյօր :

Փագաթ պու աշվալա նիհայէթ  
վերմէք իչիւն Սթանպուլտան  
մախսուս պիւր հէյէթ կէօնտէրիլ-  
միշ տիւր :

— Մանասթր ճիւղարընտա սըրպ  
չէթալարըն Պուլկարլարը գօր-  
գուտարագ սըրպ եաբմաղա չա-  
լըշտըգլարընտան տօլալը Սթան-  
պուլտաքի պուլկար էքսարքը սա-  
տարալմա պիւր իշթիլգանամէ  
վերմիշ տիւր. Սատրաղամ Պուլ-  
կարլարըն մուհաֆաղասը իչիւն  
իգթիլգա իտէնլէրէ էմը վէրէ-  
ճէկինի վատ իթմիշ տիւր :

### ՏԱԽԻԼԻԷ

Ֆէխ. Բրէնո հաղրէթլէրի էվ-  
րօբատան ալտէթինտէ Պուգրէշ  
սթասիօնընտա Բուժանիա վիլի-  
ահտը րրէնա Ֆէրտինանդտան  
գարշըլանուպ, պէրապէր գրալ  
կարօլըն սէրայընա կիթմիշլէր,  
օրատա թաամ իթտիլքտէն վէ  
գրալ իլէ իքի սաաթ միւլաղաթ  
էյլէտիլքտէն սօնրա, վէլիահտ իլէ  
պէրապէր սթասիօնա կիտուպ  
եարը կէճէտէ թըրէնի մախսուս-  
լէ հարէքէթ իթմիշ վէ կէճէնին  
միւթէպաղըսընը ճրօօվատա կէ-  
չիւմէքլէ բաղար կիւնիւ վաբը-  
լէ Բուսշուղա չըգուպ տօղրու  
թըրէնէ րաղիպլէ Սօֆիայա կիթ-  
միշ տիւր :

— Վիտին—Մէղտէր չըմէնտը-  
ֆէր խաթթը եաբըլաճաղընտան,  
Բուժանիանըն Գալաֆաթ չէհրի  
իլէ պաղլամագ իչիւն, Գուհա իւ-  
զէրինէ պիւր տէմիր քէօրիւ եա-  
բըլմասը խուսընտա Պուլկարիա  
վէ Բուժանիա հիւքիւմէթլէրի  
պէյնինտէ միւլէքէրաթ պաշլա-  
մըշ տըր :

— Ֆիլիպէտէ էլէքթրիկ թը-  
րամվալը ետրմագ վէ էլէքթրիկ-  
լէ թէնվիւր իթմէք բրօժէլէրի  
Ֆիլիպէ պէլէտիլէսի թաստիգ ի-  
չիւն մինիսթէրէ եօլլամըշ տըր :  
— Տիւն չէհրիմիղտէրի միլլի  
քիլիսէմիղտէ Գալէնտէրեան նամ  
սէքսէնպէշլիկ պիւր իսթիար քի-  
լիսէտէն իչէրի կիւրուպ գալթա-  
զընը պիւր թարաֆա գօյաճաղը  
սանիէտէ տիւլիպ էօլմիւշ տիւր :

— Պուլկարտան պիւր գաշ Բուժ-  
լար Պուլկարլարտան զապթ օլը-  
նան քիլիսէնին կէրի վէրիլմէ-  
սինի րէճա իթմէք իչիւն Սօֆիա  
յա կիթմիշլէր աիւր :

### Ր Ո Ւ Ս Ի Ա

Իսթիլալ էսնասընտա զարար-  
տիտէ օլան էճնէպի թապալալա-  
րընա պիւր չէյ վէրմէյէճէկինի  
հիւքիւմէք պէյան իթմիշ տիւր :  
Եալընըզ զարարա տիւլար օլանլար  
քէնտիլէրինի մուհաֆաղալա մէ-  
մուր օլանլարտան թաղմինաթ  
տաղա իտէպիլէճէք տիւր :

— Ճաբօնլըլարա տօնանմասը  
իլէ պէրապէր թէսլիմ օլան ա-  
միրալ նէկօպաթօլըն վէ րէֆիգ-  
լէրինին մուհաքէմէսի Բէթրս-  
պուլկտա րուլէթ օլունուպ իտա  
մա մահքիւմ օլտուլար. Փագաթ  
մահքէմէի ասքէրիէ Չար թա-  
րաֆընտան իտամ ճէղասընըն օն  
սէնէ քիւրէք ճէղասընա թահ-  
վիլ օլընմասընը րէճա իթմիշ  
տիւր :

#### Ր Ո Ւ Ս Ի Ա ՎԷ ՃԱԲՈՆ

Սուլհ ահտնամէսինտէ պաղը  
միւրհէմ օլան խուսուսաթ հագ-  
ընտա ճաբօն հիւքիւմէթի Բու-  
սիայա 3—4 նօգթա իչիւն պիւր  
նէվ ուլթիմաթու վէրմիշ տիւր :  
Բէթրսպուլկտա պախուսուս Չա-  
րըն սէրայընտա պու խուսուստա  
րահաթսըղլըգ հասըլ օլմուշ տըր :  
Մէղքիւր նօգթալար հագընտա  
պաշտանմըշ օլան մուխապէրաթ  
ու միւլէքէրէթ զօրլըղա թէսա-  
տիւլ իտէյօր. Ճաբօնլար զալէպէ  
իթտիլքլէրի Բուսլարը պու սըրա  
զօրա գօշմագ իսթէյօրլար, տի-  
կէր տէվլէթլէրին միւտախէլէսի-  
նի գապուլ իթմէյիլ տէյօրլար :

#### Չ Ի Ն

Չինին Գուէնսու էյալէթինտէ  
գըթլըգ հիւքմ իթմէքտէ օլտը-  
ղընտան միլիոնլարճա ատամլար  
աճլըգտան էօլմէք թէհլիքէսին-  
տէ տիւրլէր. Գըթլըգ կիւն պէ-  
կիւն եալըլմագտա տըր :

— Մ. Ամերիկայ Րէյիսի Չին-  
լիլէրէ իանէ վէրիլմէսի հագ-  
ընտա էհալիէ պիւր տալէթնամէ  
նէշր իթտի :

— Ամերիկանըն Մեսուրի վի-  
լայէթինտէ չըմէնտըֆէրտէն գա  
զաէն իքի սիլաշ էօլմիւշ օլըղը  
սէպէպլէ, եէրլի սիլաշլար հիտ-  
տէթլէնմիշլէր վէ սիլաշ թէտա-  
րիքի իլէ պիւրիւն պէյաղլարը  
էօլտիւրէճէքլէրինի իլան իթմիշ-  
լէր :

### ԹԻԻՔՃԱՐԻՅԷ

ՎԱՌՆԱ, 16 Դեկտեմբեր  
ՉԱԽԻՐԷ

|                      |               |              |
|----------------------|---------------|--------------|
| Պուլկար              | 100 քիւ       | 10-60/12-80  |
| Արապա                | 52-58 լիպ.    | 7. 10        |
| ԱՐԲԱ,                |               |              |
| Վալիս                | 100 քիւ       | 10-40/10. 80 |
| Արապա                | 42-47 լիպ.    | 5-80/6       |
| ԵՈՒԼԱՅ արապա         | 33/36 լիպ.    | 4. 80/5. 20  |
| »                    | 100 քիւ       | 11. 70. 12   |
| ՉԱՎՏԱՐ արապա         | 52/57 լիպ.    | 7/7. 20      |
| ՅԱՍՈՒԼԵԱ արապա       | 100 քիւ       | 16/23        |
| ԲԱՐԻՅԱ               | 100 քիւ       | — եօգ        |
| Արապա                | 100 քիւ       | եօգ          |
| ՏԱՐԸ արապա           |               | 6. 6/40      |
| ԲՕԼՕՁ արապա          | 55-60 լիպ.    | 12. 14.      |
| ՄԻՍԻՐ 57-58 լիպ.     | առապա         | 6. 40/7. 00  |
| »                    | 100 քիւ       | 9. 20/9. 50  |
| Կիւնտէ վալիս         | 40/50 վէ      | 500—600      |
| արապա կէլմէքտէ       | վալիս մուամէ- |              |
| լէսի նաբօլէօն 20 ֆր. | արապա մու-    |              |
| ամէլէսի նաբօլէօն 20. | 20            |              |

#### ՊԱԳԱԼԻՅԷ

Վարնա քիւստանտա պաղպալիլ  
մալլէրին պու կիւնքի ֆիլաթը, ալթուս  
ֆրանք իլէ :

|                        |                 |
|------------------------|-----------------|
| ԳԱՎԷ                   | 2.05/ 2.20      |
| Շէֆէր նէմցէ            | 87              |
| Շէֆէր քէսմէ            | սանտըգ 48       |
| Բիւրիւն ձէնօվա չուվալը | 42.             |
| » Ֆիլիպէ               | 38/50           |
| » Ինկիլիկ »            | 32              |
| Բիւրիւ »               | 49.             |
| ԿԱՁ Սանտըգը            | 10 30           |
| Չէթիւն եաղը քիւ        | 85—1. 5         |
| ԳՈՒՐՈՒ ԲԱԳԼԵՄ          | 48. 50          |
| ԵՈՒՄԱՐԹԱ               | 100 ատէթի 7. 50 |

### ԾԱԽՈՒ ԳԻՐՔԵՐ

ԾԻՒՊԱՐՏ Ա. հատոր (162 էջ) 1 ֆր.  
» Բ. » (433 էջ) 2 ֆր.  
ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ կամ ՄՐՄՈՒՆԶ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ երկրորդ անգամ տպագ-  
րուած եւ ճոխացած. Գին 1 ֆր.

ՆԷՏԱ կը պատկերացնէ Պուլկար-  
նիւրու նիստ ու կացը ու թուրքերէ  
կրած տառապանքը անոնց ազատու-  
թիւնէն յառջ. Գին 50 սանգիմ

ՀԱՅՐԵՆԻԿԻ ԶՈՔԵՐ Պատկեր  
մը Տաճկահայաստանի իրական կեան-  
քէն : Զեղչեալ գին 1 ֆր.

Այս գրքերը ստանալու համար գիմի  
ՎԱՌՆԱ «Ի ր աւ ու ն ք» ի խմբագ-  
րութեան

### ՕԹԷԼ ՍԱՄՍՈՆ

ԱՂԵՔՍԱՆՏՐԻԱ

ճառի քիւպակսի դէն քիւ 18

Տիար Ս. Շէքերեանի վարչութեան  
տակ գտնուող այս ծովագրեայ եւ  
օդաւէտ պանդօղի իր մաքրութեամբ  
եւ ամեն կատարելութեամբ յանձնա-  
րարելի է մէր հայրենակիցներուն : Այ-  
ցելուն հոն կը գտնէ նաեւ մաքուր  
ճաշարան մը արեւելեան եւ եւրոպական  
ճաշակով մաքուր եւ համարժէտ կերա-  
կուրներով, Գիները չափաւոր են :

Одговор редакторъ А. Курбетиянъ

печатница Д. Тодоровъ и С-но — Варна